



ԵՂԻՎԱՐԴ

(Եղիշե պատրիարք Տերտերյան)

ԿԱՐՄԻՐ ԶՕՐԱՎԱՐ*

(Հատվածներ պոեմից, Երուսաղեմ, 1975, տպարան սրբոց Հակոբյանց)

Առաստ էր գարնանային.
Կը հնչէին զանգերն անդու
Տանարներուն,
Եւ ամէն կողմ կը լսուէին
Երգ ու աղօթք դառնաթախիծ:

Մասիսն հեռուն, արծաթաթագ,
Մէջքին կապած ստրն Երասիսին
Ադամանդեայ,
Կոտի պատրաստ ասպետ մ'ինչպէս՝
Կը պատուէր գլխուն իջած
Ամպերը սև:

Հովի թևով, տազնապահար,
Հետախոյզներ կը հաւանէին,
Հաղորդելու թէ թշնամին

Կը մօտենար հարսուպին
Սահմաններուն Հայ աշխարհին:

Բանակն Հայոց,
Տօնէն յետոյ կարմիր Զատիկի,
Հազած երկաթ, հուր ու հաւատք,
Ոգետրմամբ մարտիրոսի
Կ'ըլլար հաղորդ՝
Մահու, կենաց մեծ խորհուրդին:
Կ'որոտային շեփորներ գոո՝
Բզկտելով սիրուն երկնքին:

Վարդանն հեծած էր բոցաշունչ
«Վիշապ»ն աղուոր,
Խրխիւնցն որուն պղնձաձայն
Կը տարածուէր մինչև հեռուն:
Մէջքն էր կապած ոսկեգօտին,
Լանջքին վրայ եւ ազդրերուն
Կը շողային
Պղնձաձող պատեաններ կոտ:
Գըլխուն պողպատ ձող սաղաւարտ,
Վրան՝ արծի հարթաքանդակ,
Նշան տոհմին իր քաջարի:
Հազարատր աչքեր ժրպտուն
Կ'ողջունէին
Սպարապետն Հայոց Մեծաց,
Որ նպտածքով լայն ու խոհուն՝
Կ'ընդգրկէր ողջ բանակն անկր՝
Մահն անգոսնող զինուորներուն:
Հովի բերնին կը ծփային
Նիզակներու ծայրին բարձած
Դրօշ, խաչվառ,
Յոյսերու պէս պայծառապալ:

* 1975 թվականի դեկտեմբերի 19-ին, ուրբաթ օրը, Երևանում, հանդիսավոր իրադրության մեջ բացվեց 451 թվականի Ավարայրի ճերտամարտի զորավար Կարմիրն Վարդան Մամիկոնյանի մոմուսնետալ, պղնձակոթի հուշարձանը (գործ՝ տաղանդավոր արվեստագետ Երվանդ Քոչարի, ճարտարապետ՝ Սունիան Քուրքչյան):

Քաղաքամայր Երևանի ճարտարապետական կերպարը հարստացնող ու գեղեցկացնող զորավար Վարդան Մամիկոնյանի հուշարձանի բացման առիթով մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում նաև անվանի բանաստեղծ Եղիվարդի «Կարմիր Զօրավար» պոեմից հատվածներ:



ԲԱԶՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԱՐՁԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

«Չօրավարներ ու զինուորներ
 Մեր հայրենեաց,
 Բազում անգամ
 Կրտուիք ենք մենք բռնադատեալ՝
 Ուրիշներու փառքին համար,
 Պիտի կրտիներ բաց այս անգամ
 Սիրոյն համար մեր Աստուծոյն,
 Պաշտպանելու
 Մեր խղճմտանքն ու մեր հաւատք:
 Գիտե՛մ, սիրտերն ամենուն ձեր
 Կը բարախեն՝
 Մահուան յօժար տրոփիւնով
 Եւ կ'ըստանան մեծ գրոհին՝
 Հարուածելու կայծակնաբափ
 Ասագակներն ամբարհաւան
 Մեր հոգիին ու մեր երկրին,
 Որ եկեր են ապշուպելու
 Խիղճն ու սրտին մեր բոլորին:
 Չունինք երկիւղ թիւն անոնց,
 Ելելու անգամ չի մտնիր մարդ:
 Թող մեր մարմնով մտնի բնօրին
 Մահն հայրենեաց,
 Հազար ողջո՛յն նահատակաց»:

«Յն ա՛նդր, բաշեր, մա՛ն ոտիփն»-
 Չայնց ուժգին
 Սպարապետն Հայոց Մեծաց,
 Կեցած ձիւս սասանդակին,
 Բարձրացնելով ձեռքն իր խրոխտ,
 Պատգամ մ'իճչպէս արխնագիր:
 Հոփի թևով ու փողերու
 Էրկարածիգ՝
 Արձագանգեց ձայնն այդ կախարդ
 Սիրտերէ սիրտ,
 Պատուելով կտրծքն Աարայրի:

Մոռցած ինքզինք, տեղ, ժամանակ՝
 Կը կրտուէր ան,
 Իր ուժին մէջ տասնապատուած,
 Հարուածներուն ներքեւ իր շանթ՝
 Կը փոռէին մարդ, երիվար:

Կը կրտուէր ան,
 Վրէժխնդիր ու տեւաբար,
 Որպէս ոգին Հայ աշխարհին:
 Յաւերժութեան անթաքթ հայոց
 Էակ մ'իճչպէս՝
 Բացեր էր ան դուռն հոգիին
 Անճանօթէն զպիք ուժին:

Սաղաւարտն էր թըրներ զըլխէն,
 Ու վահանն իր դարձեր էր մաղ,
 Իսկ վերքերէն կը ծայթթէր բոց՝
 Մահու հետով:
 Կը խորանար խաւարն իր շուրջ-
 Ինչպէս անդունդ,
 Կը դողար հողն իր ոտքին տակ,
 Ու կը թուէր քիչ քիչ սուզուիլ
 Ծոցը մութին:
 Կ'իյնար հերոսն Աարայրի,
 Հազար վերքով,
 Կեռ մը ինչպէս լեռներու քով,
 Ակուաներուն մէջ դեռ բռնած
 Նետն ոտիփն:

Լուսարացին, գետի սոփին
 Բաշեր հազար
 Կը ննջէին անգերեզման:
 Յօղն սատուան
 Արցունք արցունք կը դողողար
 Սարսափին դէմ այդ բարացան՝
 Երկինքն Հայոց աչք էր սսսսսս:

Այնտեղ էին
 Նահատակ գօրքն ու գօրականք,
 Մահուան մէջն իսկ երպարացած,
 Սուրերն իրենց՝
 Արեւին դէմ փայլակնացայտ,
 Ծիծաղ մ'իճչպէս սատ ու անգութ:
 Մութ շեղջին դէմ մարմիններու,
 Հազար վերքով
 Ինկած էր բաշն Աարայրի.
 Սաղաւարտն իր նետուած հետուն,
 Մաղ էր դարձեր մահուան պատուար
 Վահանն իր կողմ՝ ինկած կողքին,
 Բաց կը մնար դեռ իր աջին,
 Արիւնթաքթախ իբրև կայծակ,
 Մեր արտամութեան սուրն անխորտակ:

ՎԵՐՋԵՐԳ

Անցան օրեր ու տարիներ
 Անցան դարեր-
 Հեղեղելով արիւնն իրենց
 Մազապարթին մեր պատմութեան,
 Խորհուրդն որուն՝
 Մենք բնթեռնել կարենալու
 Համար իշանք բիր անգամներ
 Ծոցն հողերուն:

Անցան մեզմէ, մեր դարերէն,
 Հազար իշխան ու գօրական,
 Փառք ու պապատ,

Բայց մնաց միշտ խորն սիրտերում
Բոցե պատկերն մեծ ձևոսին
Ասարայրի,
Չիուն վրբան իր սպիտակ,
Իբրև պատգամ՝
Մահուան ընդդեմ մաքարույու:

Անցան դարեր,
Կրակն ինչպես բլխող անջլջ,
Բիրատորներ գացին մահուան,
Սիրտերն իրենց ըրած սեղան
Հայրենիքին,
Պահելով միշտ խորհուրդն անյաղոք
Իրենց ցեղին,
Որ կը մաքրե ժանգն ու արատ
Հոգիներէն մեր բոլորին:

Դարեր յետոյ,
Երիվարովն իր հրեղէն
Կեցած նորէն
Հողին վըրայ իր պապերուն,
Ինչպես երբեմն
Դաշտին վըրայ Ասարայրի,
Պարսիկին դէմ մեր օրերուն,
Կը նայի ան
Մեր նորագոյրթ հայրենի տան,
Աստուծոյ մը ծնունդին պէս
Առած մարմին,
Մերմակ յոյսէն ու հաւատքէն
Մեր կոյսերուն,
Պարմաններուն և ծերերուն,
Ոսկորներէն նահատակաց:

Հոն են շէներն,
Նոր քաղաքներ ու նոր փառքեր,
Ուժը պատմող

Ստեղծագործ ժողովուրդին
Մեր դարատր:
Խորշն այդ անուշ
Աւերակէն մեր հայրենի
Որ ծաւալի պիտի ընդհուպ
Ազատելու լքուած հողերն
Մեր պապերուն:

Հոն է սիրտն իր, նոր պատարագ,
Գինին որուն նշխարքին հետ՝
Մատոյց այնքան առատօրէն
Չեռքն ոճիրին:
Հոն է սիրտն իր,
Հին ըմպանակ և նոր բուրուստ,
Որկէ կաթիլ, ուրկէ բուրում
Կը թաւալի նորէն հիմա,
Մեզ ընկու այդ հողերուն
Եւ իր սիրոյն
Ընդունարան անքակուելի:

Մեր հետն է ան,
Ասարայրի հերոսն անմահ,
Երէկ, այսօր ու յախտեան.
Գօտիէն կախ դեռ կ'երկարի
Շուքը ստրին արինակաթ,
Եւ այդ ստրով կը զարնէ ան
Արարատին,
Մեր պատմութեան Լացի Պատին,
Հրախրելու ողջերուն հետ
Մտեղները իջած հողին՝
Ասկէ առաջ վաթսուն տարի,
Կրակներովն իրենց ոխին
Ու վրէժին
Հրդեհելու սիրտն ոստիին,
Պագարին մէջ վաղուան կարմիր:

